շնորհի հարատեւ խաղաղություն եւ նորանոր հաջողություններ: Թող Աստված առավել զորացնի սիրիահայ հավատավոր համայնքը, երկնառաք երջանկությամբ լցնի բարեպաշտ Մեր հայորդյաց ընտանեկան հարկերը՝ ամուր ու հաստատուն պահելով սերն ու հավատարմությունը առ սրբազան մեր արժեքները, մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն. Ամէն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

(Դամասկոս, նոյեմբեր 14, 2009 թ.)

Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ Արժանապատիվ հայրեր,

Մեծարգո Դեսպան Հայաստանի Հանրապետության,

Սիրելի բարեպաշտ զավակներ մեր Եկեղեցու.

Ուրախությամբ է համակված Մեր հոգին, որ Աստուծո կամքով առիթ է ընձեռվել Մեզ Սիրիայի Արաբական Հանրապետության մեծարգո նախագահ տիար Բաշար Ալ-Ասադի ազնիվ հրավերով այցելելու Դամասկոս՝ մեր ժողովրդի համար հարազատ ու սիրելի այս քաղաքը, եւ աղոթական օրեր ապրելու սիրիաբնակ, ինչպես եւ Լիբանանից եւ Հորդանանից ժամանած հավատավոր հայորդիներիդ հետ:

Շնորհակալ հոգով Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Սիրիո պատվարժան նախագահին, ում այս տարի առիթը ունեցանք հյուրընկալելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ Մեր գնահատանքը բերելու այն ազնիվ ու բարի վերաբերմունքի համար, որ Սիրիայում մշտապես ցուցաբերվել է հայ համայնքի հանդեպ: Այս պահին Մեր աղոթքների մեջ է նաեւ Սիրիայի բարեհիշատակ նախագահ, մեծավաստակ պետական գործիչ Հաֆեզ Ալ-Ասադը՝ հայ ժողովրդի եւ Հայոց Եկեղեցու մեծ բարեկամը, ով իր երկարամյա կառավարման տարիներին մեծ օժանդակություն է բերել մեր ժողովրդին՝ արժանանալով հայորդիների սիրուն ու գնահատանքին:

Գոհունակ սրտով ողջունում ենք այստեղ ներկայությունը Գրիգորիս Գ Լահամ Սիրիո Պատրիարքի եւ Ասորի ու Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիներից մեր բոլոր հոգեւոր եղբայրների մասնակցությունը սիրո այս ճաշին:

Սիրելի՛ զավակներ Մեր, այսօր ուրախ ենք ասելու, որ ձեզանով հպարտ է Հայրապետիս հոգին: Դուք սիրված եւ գնահատված քաղաքացիներն եք Սիրիայի շնորհիվ ձեր ազնիվ ու արդյունավոր ջանքերի, որ բերում եք օրհնյալ այս երկրի տնտեսական, ընկերային ու մշակութային կյանքի զարգացմանը, Սիրիայի առաջընթացին ու բարօրությանը: Սիրիան ձեզ համար երկրորդ Հայրենիք է՝

երկիր, որ սիրելի է ձեզ համար, որտեղ դուք ծնվել եւ հասակ եք առել, գտել ձեր կյանքի ուղին, հասել հաջողությունների: Ձեր ստեղծագործ ու շինարար կյանքով ու գործերով դուք վարձահատույց եք Սիրիո պետությանն ու ժողովրդին, որ Ցեղասպանության դժնդակ օրերին առանց երկմտելու օգնության ձեռք մեկնեցին ու փրկեցին հայրենազրկված, տարագիր ձեր հայրերին: Այո՛, ձեր Հայրապետը հպարտ է ձեզանով, քանզի դուք բարձր եք պահում մեր ժողովրդի պատիվն ու բարի անունը, եւ ձեզանով այստեղ մեծ համարում ունեն Հայաստանն ու Հայոց Եկեղեցին: Արդարեւ, առաքյալի խոսքի համեմատ այսօր Մենք էլ կարող ենք ձայնել. «Մեծ վստահություն ունեմ ձեր հանդեպ, մեծապես հպարտ եմ ձեզանով, լի եմ մխիթարությամբ, լցված եմ ուրախությամբ» (Բ Կորնթ. Է 4):

Պատվակա՛ն զավակներ հայ ժողովրդի, գոհունակ ենք սրտով, որ աննվազ ենք տեսնում ձեր որդիական սերը հանդեպ Հայաստան մեր երկիրը՝ դարերի աղետներից փրկված մեր փոքրիկ աշխարհը, որ Հայրենիքն է համայն հայության: Այնտեղ՝ Ազատն Մասյաց հայացքի ներքո, Սուրբ Էջմիածինն է՝ մեր նվիրական հոգեւոր կենտրոնը, որի կանթեղի լույսով են վառվում հայոց եկեղեցիների կանթեղները աշխարհի բոլոր կողմերում: Այնտեղ մեր հնագույն վանքերն ու եկեղեցիներն են՝ խնկաբույր եւ աղոթախոս, որոնց կամարների ներքո հնչել է հայցը մեր պապերի՝ վասն հավատի եւ հայրենյաց պահպանության, վասն խաղաղության եւ երկնային պարգեւների: Այնտեղ Լուսավորչի Սուրբ Աջն է, Խոր Վիրապը, Սուրբ Գեղարդը, Մատենադարանը, այնտեղ ապրում են անունները մեր երկիրը շենացրած ու պահպանած, դեպի Աստված մեր ժողովրդի ընթացքը լուսավորած մեր նախնիների՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Սուրբ Մաշտոցի, Սուրբ Վարդանի, Անդրանիկի, Կոմիտասի, երանաշնորհ մեր հայրապետների, հազար-հազարների: Մեր պատմության սրբազան հիշատակներով այնտեղ է ապրում ազատ հայ հոգին, որ ուր էլ լինենք՝ ուղեկից է մեզ հայաբարբառ խոսքով, շարականով ու աղոթքով:

Գիտենք, ձեր սրտերում են Հայրենիքի պատկերը եւ Սուրբ Էջմիածնի խորհուրդը, որով մեր ժողովուրդը տեսնում է Փրկչին, Ով Սուրբ Էջմիածինը շնորհեց մեզ, որպեսզի այն լինի Մայր Աթոռը հայոց հոգեւոր կյանքի՝ հավաքելով աշխարհում սփռված ազգիս զավակներին օրհնության իր թեւերի ներքո: Այսօր, գոհություն Աստուծո, պայծառության օրեր է ապրում Սուրբ Էջմիածինը: Մայր Աթոռում իրականացված ձեռնարկները զորացնում են Սուրբ Էջմիածնի առաքելությունը, նպաստում նաեւ Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Մայր Աթոռիս հաջողությունները ձերն են, սիրելինե՛ր, ամբողջ հայությանը: Մենք վստահ ենք, որ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո հաղթանակելու է ազգային մեր միասնականությունը, հավատում ենք, որ այսօրվա մեր ջանքերի ու աշխատանքների արդյունքները առաջիկա տարիներին առավել համախումբ ու զորեղ են դարձնելու մեր ժողովրդի զավակներին Ավստրալիայից մինչեւ Հյուսիսային ու Հարավային Ամերիկա, Եւրոպայից մինչ Ծայրագույն Արեւելք ու Աֆրիկա: Վերջին տասնամյակների փոփոխությունները ինչպես մեր երկրում, այնպես եւ աշխարհում, հնարավոր են դարձնում, որպեսզի եկեղեցական եւ ազգային մեր կյանքից դուրս մղվեն

պառակտումն ու երկփեղկումները, ամոքվեն հիասթափություններն ու վշտերը: Այդ է աղոթքը Քրիստոսասեր հայորդիների, ովքեր այսօր ավելի ու ավելի հաճախ, ավելի քաջալեր եւ ուրախ սրտով այցելում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, անկախ ու ազատ երկիրը Հայոց:

Սիրելինե՛ր, մեր Հայրենիքի ազատ կյանքի հետ վերազարթոնք է ապրում համայն մեր ժողովրդի հոգեւոր ու ազգային կյանքը: Հայաստանի անկախությունը եւ Արցախի ազատագրությունը հնարավոր են դարձրել աշխարհասփյուռ հայության անկաշկանդ առնչությունները Հայրենիքի հետ, հնարավոր են դարձրել մեր միասնական կյանքի կառուցումը, միջոցների եւ ջանքերի համատեղումը՝ մարմնավորելու համար գալիքի մեր հույսերը, մեր ձգտումներն ու նպատակները: Հայրենիքի շուրջ համայն հայության համախմբումը երաշխիքն է ազգային մեր կյանքում դժվարությունների ու փորձությունների հաղթահարման, մեր հաղթանակների, մեր հարատեւության:

Այսօր եւս քիչ չեն հրամայականները: Վերջին շրջանում մեր կյանքը հուզում է Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների կարգավորման գործընթացը, անհանգստությունը, թե ինչպիսի՞ն կարող են լինել հետագա ընթացքները եւ որքանո՛վ կարող են վտանգել մեր ժողովրդի ապագան եւ ձգտումները: Թուրքիայի հետ մեր ժողովրդի ունեցած պատմական դառը փորձառությունը, Ցեղասպանության իրողության հանդեպ նրա մերժողական քաղաքականությունը արդարացիորեն խորացնում են մեր ժողովրդի հոգում տարակույսները եւ մտահոգությունները Թուրքիայի հանդեպ, նրա՝ ազնիվ գործակցության պատրաստակամության նկատմամբ:

Անկախության առաջին իսկ օրից սկսյալ մեր երկիրը կողմնակից է եղել առանց նախապայմանների տարածաշրջանում բազմակողմանի համագործակցության ու փոխշահավետ հարաբերությունների հաստատման՝ որպես երաշխիք կայուն խաղաղության ու անվտանգության: Մեր ժողովուրդը, որ հաճախ է տուժել խաղաղության պակասից, այսպիսի հեռանկարը կարող է ողջունել՝ հաստատուն մնալով իր իրավունքների պաշտպանության դիրքերում: Անկախ Թուրքիո հետ մեր հարաբերությունների աստիճանից, առանց դույզն-ինչ նահանջի ու զիջումի, մենք՝ ազգ ու պետություն, առավել համախմբված ու միավորված, պիտի շարունակենք հետամուտ լինել Ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը, Արցախի ազատ ապրելու իրավունքի պաշտպանության՝ մինչեւ հաղթանակ: Տարակույս չունենք, որ հայրենի պետությունը շարունակելու է լինել մեր ժողովրդի արդար իրավունքների, ազգային մեր Դատի, մեր ձգտումների ու նպատակների առաջնորդողը: Տարակույս չունենք, որ համազգային մեր բոլոր հնարավորությունները պիտի շարունակեն ուղղված լինել այս կարեւորագույն խնդիրների, մեր ազգային կեսական շահերի պաշտպանությանը, որը մյուռոնադրոշմ մեր հոգու պարտքն է մեր նահատակների, մեր խոնարհված սրբատեղիների, մեր ավերված շենների, մեր պատմության ու սերունդների առջեւ: Մենք հավատում ենք, որ միայն հայրենաբնակ եւ սփյուռքահայ Մեր զավակների համախումբ ու

միաբան ջանքերով պիտի կարողանանք հաղթահարել ներկա ժամանակներում մեր ժողովրդին բաժին հասած փորձությունները՝ ի սեր հայոց պետականության զորացման եւ ազգային մեր նվիրական իղձերի ու տեսիլքների իրագործման:

Սիրելի՛ հավատավոր զավակներ, մեծազնի՛վ բարերարներ, Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ, որ մշտապես նախանձավոր եք Դամասկոսի թեմի պայծառության համար, անվազ հանձնառությամբ հոգում եք ազգային հաստատությունների խնամքը եւ աջակից եք առաջնորդ սրբազանին ու եկեղեցական վարչությանց անդամներին իրենց ծառայության մեջ: Ձեր ներկայությունն այստեղ՝ Մեր այցելության առիթով հրավիրված սիրո ճաշի սեղանի շուրջ, վկայում է Սուրբ Էջմիածնի հանդեպ Ձեր նվիրումը, որով սատարում եք Մայր Աթոռի առաքելության արդյունավորմանը: Մեր հանդիպման այս երջանիկ առիթով վերստին Մեր գնահատանքն ենք բերում Մայր Աթոռի ազնիվ եւ մեծագործ բարերարներին՝ տեր եւ տիկին Գառնիկ եւ Անի Յակոբյաններին՝ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի համալիրի կառուցումը հովանավորելու համար, Քերոբ եւ Ֆիմի Բոյաջյաններին՝ Մայր Աթոռի միաբանական շենքի կահավորման համար գորգեր նվիրելու եւ Գաբրիել եւ Անժել Ջեմբերջիներին՝ Մայր Աթոռի կրթական եւ հրատարակչական ծրագրերին աջակցելու, մանուկներին խաղահրապարակ նվիրելու համար, ՀԲԸ Միությանը եւ նրա եռանդաշատ նախագահ տիար Պերճ Սեդրակյանին: Քաջալեր հոգով գնահատանքի Մեր խոսքն ենք ուղղում Ձեզ, սիրելի՛ սիրիաբնակ հայորդիներ, որ անհոգնաբեկ ու անմնացորդ սիրով Ձեր ծառայություններն եք մատուցում մեր Հայրենիքին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում նաեւ բոլոր նրանց, ովքեր պատշաճորեն կազմակերպեցին Մեր այցելությունը Սիրիայի Արաբական Հանրապետություն:

Հայրենիք ենք վերադառնալու ուրախ ու քաջալեր հոգով՝ Մեզ հետ տանելով այն ջերմ ու բարի տպավորությունները, որ ստացանք ավանդաշատ ու հայաշունչ ձեր համայնքում: Հայցում ենք առ Աստված, որ խաղաղության մեջ պահպանի Սիրիան, օրհնի վսեմաշուք նախագահ Բաշար Ալ-Ասադի եւ Սիրիո բարեխնամ իշխանավորների ու աստվածասեր ժողովրդի ջանքերը՝ հանուն երկրի բարգավաճումի եւ կյանքի բարօրության:

Վերստին Հայրական օրհնություն ենք բերում ձեզ Մեր սրտի խորքից, օրհնություն ձեզ Միածնի Իջման Սուրբ Սեղանից, հայրենական մեր բոլոր վանքերից ու սրբատեղիներից, Լուսավորչի Գահից: Մի՛շտ հիշեցեք, որ ձեր Հայրապետը սիրում է Ձեզ, սպասում է Ձեզ Սուրբ Էջմիածնում, ազգային մեր մեծագույն, սուրբ ու նվիրական ուխտավայրում՝ օրհնելու ձեզ ու զորանալու ձեր հավատով ու ձեր գործերով, ազգային ու եկեղեցական կյանքի ձեր նոր հաջողություններով:

«Հայր Աստծուց եւ Տեր Հիսուս Քրիստոսից՝ Հոր Որդուց շնորհ, ողորմություն, խաղաղություն ձեզ ճշմարտությամբ եւ սիրով». Ամեն: